Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 սեպտեմբերի 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Մ. Վարդանյանս վերանայելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-143/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ՊՏ 6/160-C տեսակի պոմպի պահեստամասերի ձեռք բերման նպատակով 2023թ. սեպտեմբերի 7-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-143/23» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակցի մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Դոնեռ» ՍՊԸ-ն: Հայտերի ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի պահանջներին համապատասխանող դիմում-հայտարարություն և ապրանքի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագիր: Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել և «Դոնեռ» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Դոնեռ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը 2023թ սեպտեմբերի 27-ի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Դոնեռ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատել է անբավարար:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Դոնեռ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Դոնեռ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրենի
պարտականությունները կատարող **Մ. Վարդանյան**